ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
2018թ. դեկտեմբերի 5-ի նիստի

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 38-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանի տարեկան հաշվետվություն:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը հանդես եկավ ֆակուլտետի 2017-2018 ուսումնական տարում գործունեության մասին հետևյալ հաշվետվությամբ.

1. Ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանք՝

Ֆակուլտետում ուսումնական գործընթացի արդյունավետության ապահովման նպատակով անընդհատ լրամշակվում են ինչպես բակալավրիատի, այնպես էլ մագիստրատուրայի ծրագրերը: Առաջին հարցը, որի հետ առնչվում ենք, կրթական ծրագրերում ուսանողների ներգրավումն է. եթե բակալավրիատում ուսանողների պակաս չի գրանցվում, ավելին՝ մեր կողմից քննարկվում է ուսանողների թվաքանակի կրճատման հարցը, ապա մագիստրոսական ծրագրերի մակարդակում որոշ խնդիրներ ծագում են: Գաղտնիք չէ, որ ուսանողների մի մասը նախընտրում են մագիստրոսի կրթություն ստանալ ոչ թե ՀՀ-ում, այլ արտերկրի առաջատար բուհերում կամ էլ դժվարություններ են ունենում կրթությունը և աշխատանքը համատեղելու հարցում և նման պարագայում նախապատվություն են տալիս այն ԲՈՒՀ-երին, որոնք առավել ճկուն ուսումնական գրաֆիկով են կրթություն ապահովում:

Միաժամանակ, մագիստրատուրայի հանդեպ ուսանողների ավելի ցածր հետաքրքրության պատճառներ շարքում անհրաժեշտ է առանձնացնել երկու գործոն. աշխատանքի անցնելիս մագիստրոսի և բակալավրի կարգավիճակների միջև տարբերակման բացակայությունը, ինչպես նաև մագիստրատուրայում առաջարկվող կրթության բովանդակությունը:

Անդրադարձ կատարեմ հատկապես երկրորդին: Ներկայումս ֆակուլտետում առաջարկվող մագիստրոսական ծրագրերը հիմնականում կառուցված են իրավունքի ճյուղային առարկաները ուսումնասիրելու սկզբունքի հիման վրա, և միայն առանձին դեպքերում է (օրինակ՝ «Գործարարական իրավունք» մագիստրոսական ծրագիրը), որ շեշտադրումը դրվում է կոնկրետ ոլորտում գործունեություն ծավալող, համալիր, միջառարկայական գիտելիքների տիրապետող կադրերի պատրաստման վրա: Մինչդեռ թե աշխատաշուկայի, թե գիտության, կրթության զարգացման միտումների ուսումնասիրությունը վկայում է, որ ներկայումս մեծանում է միջառարկայական

գիտելիքների տիրապետող մասնագետների պահանջը, ինչն էլ թելադրում է նոր մասնագիտացումներ բացելու անհրաժեշտություն:

Հետևաբար, առաջիկայում սպասվող ամենալուրջ փոփոխությունը վերաբերում է մագիստրատուրայում իրականացվող ուսումնական գործընթացի բարեփոխմանը, մագիստրոսական ծրագրերի անցմանը՝ ճյուղայինից ոլորտայինի: Մասնավորապես, հնարավոր մագիստրոսական ծրագրերի ցանկը կարող են համալրել առողջապահական իրավունքը, միջազգային քրեական արդարադատությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները և իրավունքը: Այս պահին արդեն իսկ պայմանավորվածություն կա ԵՊԲՀ-ի ղեկավարության հետ՝ «Առողջապահական իրավունք» մագիստրոսական ծրագիր իրականացնելու համար, որն, ամենայն հավանականությամբ, կներդրվի մյուս ուսումնական տարվանից:

Ինչ վերաբերում է բակալավրիատին, ապա այդտեղ ևս ուսումնական գործընթացը անընդհատ բարելավվում է: դա վերաբերում է ինչպես դասավանդվող դասընթացների վերանայմանը, փոփոխմանը, նոր դասընթացնելով համալրմանը, այնպես էլ իրավաբանական լավ կրթություն երաշխավորելու նպատակով դրանց տրամաբանական հաջորդականության ապահովմանը: Օրինակ, Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի կողմից բակալավրիատում ներդրվել է նոր դասընթաց՝ իրավաբանական տեխնիկա, որի նպատակն է դեռևս բակալավրիատում ուսանողներին ապահովել իրավական ակտերի մշակման, դրանց մեկնաբանման անհրաժեշտ հմտություններով:

Հաջորդ ուսումնական տարվանից ծրագրում ենք 3-րդ կուրսում ներդնել մեծ պահանջարկ վայելող «ՀՀ վարչական դատավարություն» ընդհանուր դասընթացը, և այդ ուղղությամբ որոշակի քայլեր ենք ձեռնարկել գերմանական GIZ ընկերության հետ:

Արդյունավետ կրթություն ապահովելու անհրաժեշտ պայմաններից մեկը դասավանդվող դասընթացների ապահովվածությունն է դասագրքերով, ուսումնամեթոդական և օժանդակ նյութերով: Ֆակուլտետում դասավանդվող բոլոր առարկաները ապահովված են համապատասխան ծրագրերով, ընթացիկ, եզրափակիչ քննությունների և ստուգումների համար կազմվել են թարմացված հարցաշարեր, առաջադրանքներ:

Թեև նախորդ ուսումնական տարվա ընթացքում ԵՊՀ-ում իրականացված՝ բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի միատեսակ չափանիշով լրամշակման գործընթացի շրջանակներում ֆակուլտետի կողմից առաջարկվող բոլոր կրթական ծրագրերը վերանայվել են, սակայն մեր կողմից շարունակվում են կրթական ծրագրերը առավել արդյունավետ դարձնելուն միտված աշխատանքները:

Առանձին առարկայական ծրագրեր և քննական հարցաշարեր վերանայվել ու համապատասխանեցվել են ժամանակակից մեթոդաբանության պահանջներին՝ պայմանավորված նրանով, որ դրանք անմիջականորեն առնչվում են օրենսդրության այն ճյուղերին, որոնցում կատարվել են էական փոփոխություններ: Գերմանական «IRZ» կազմակերպության հետ նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել 2019 թ.-ին, գերմանացի գործընկերների հետ համատեղ, լրամշակել Քրեական իրավունքի և Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնների առարկայական ծրագրերը:

Ֆակուլտետում դասավանդվող առարկաները հիմնականում ապահովված են ամբիոնի դասախոսների կողմից հեղինակած մայրենի լեզվով դասագրքերով, ուսումնական

ձեռնարկներով, դասախոսության տեքստերով, մեթոդական ցուցումներով, թեստերով, գործնական պարապմունքների նյութերով, ծրագրերով: Առանձին ամբիոնների կողմից յուրաքանչյուր ուսումնական տարի դասավանդման նյութը թարմացվում է էլեկտրոնային տարբերակով և դասախոսությունների թեզիսների տեսքով զետեղվում ֆակուլտետի կայքէջում, ինչը հնարավորություն է տալիս ուսանողներին իրազեկ լինել դասավանդվող առարկային առնչվող օրենսդրության փոփոխություններին, ինչպես նաև տեսական նոր մոտեցումներին:

Հաշվետու ժամանակահատվածում հրատարակվել և ուսումնական գործընթացում կիրառվել են 5 ուսումնական ձեռնարկներ, այդ թվում՝ «Քաղաքացիական դատավարություն 1», Քաղաքացիական դատավարություն 2», «ՀՀ ընտանեկան իրավունք», «ՀՀ քաղաքացիական իրավունք. Պարտավորական իրավունք», «Վնաս պատճառելուց բխող պարտավորություններ (արտապայմանագրային պարտավորություններ)» ուսումնական ձեռնարկները: Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի կողմից նախաձեռնվել և ավարտին են հասցվել «ՀՀ արդարադատության համակարգը» առարկայի դասագրքի մշակման աշխատանքները, առաջիկայում ավարտուն տեսք կունենա ԵՊՀ ԷԻԳԿ-ի կողմից մշակված «Էկոլոգիական իրավունք» դասագիրքը, որը ֆակուլտետում պատրաստվում է առաջին անգամ:

Հաշվի առնելով հանրային ծառայությանն առնչվող գիտելիքների հանդեպ հանրային մեծ պահանջարկը, այդ թվում՝ «Իրավագիտություն» մասնագիտություն դասավանդող մյուս բուհերի կողմից, ներկայումս Սահմանադրական իրավունքի ամբիոնում նախապատրաստական աշխատանքներ են ընթանում «Հանրային ծառայություն» ուսումնական ձեռնարկի պատրաստման ուղղությամբ:

Սահմանադրական իրավունքի ամբիոնում քննարկվում է GIZ կազմակերպության հետ միասին «Սահմանադրական իրավունք» դասընթացի խնդրագիրքը նոր մեթոդաբանությամբ պատրաստելու աշխատանքները սկսելու հարցը, իսկ «IRZ» կազմակերպության հետ նախնական համաձայնություն է ձեռք բերվել «Քրեական իրավունք», «Քրեական դատավարություն» առարկաներից համատեղ խնդրագիրք մշակելու վերաբերյալ:

Այդուհանդերձ, ֆակուլտետը դեռևս լուրջ անելիքներ ունի առանձին դասագրքերի վերախմբագրման և նոր դասագրքերի հրատարակման հարցում՝ պայմանավորված օրենսդրական վերջին փոփոխություններով: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է քրեադատավարական օրենսդրության մեջ կատարված փոփոխություններին, քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի ընդունմանը և այլն: Որոշակի քայլեր են ձեռնարկվել *ՀՀ հողային իրավունք*, *ՀՀ քրեական դատավարություն (հատուկ մաս)*, *ՀՀ քաղաքացիական դատավարություն* և այլ դասընթացների դասագրքերի պատրաստման ուղղությամբ, որոնք ծրագրում ենք ավարտել ընթացիկ ուսումնական տարում: Սահմանադրական իրավունքի ամբիոնի կողմից դասավանդվող առարկաներից «Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք» դասընթացի առնչությամբ դեռևս չի պատրաստվել մայրենի լեզվով համապատասխան ուսումնական ձեռնարկ: Իհարկե այս դեպքում պետք է հաշվի առնել նաև այն, որ առարկան ինքնին որևէ կերպ չի առնչվում հայրենական իրավական համակարգի հետ, և բացի այդ՝ կան էլեկտրոնային եղանակով մշակված դասախոսություններ:

Ֆակուլտետի գործունեության առանձնահատկություններից է նաև այն, որ ֆակուլտետի դասախոսների կողմից առանձին առարկաներ դասավանդվում են նաև համալսարանի մի շարք այլ ֆակուլտետներում՝ ժուռնալիստիկայի, միջազգային հարաբերությունների, աշխարհագրության, քաղաքագիտության, տնտեսագիտության, ինչպես նաև ԵՊՀ Եվրոպական հետազոտությունների կենտրոնի մագիստրատուրայում, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտում: Այս առնչությամբ՝ լսարանի մասնագիտական առանձնահատկություններով պայմանավորված՝ կարիք կա վերանայելու համապատասխան առարկաների ծրագրերը, հարցաշարերը, ինչպես նաև վերջիններիս ապահովել անհրաժեշտ ուսումնական նյութերով:

Ուսումնական աշխատանքի կազմակերպման ոլորտում ֆակուլտետի գործունեության առաջնահերթություններից է դասախոսությունների և գործնական պարապմունքների անցկացման մեթոդների կատարելագործումը և նոր մեթոդների ներդրումը՝ ապահովելու համար տեսական հարուստ նյութի յուրացումից զատ նաև գործնական հմտությունների ձեռքբերումը: Ֆակուլտետում արդեն մի քանի տարի շարունակ կիրառվում են տեսության և պրակտիկայի կապն ապահովող, գործնական հմտությունների խորացման հնարավորություններ ընձեռող մեթոդներ, սակայն այս գործընթացը կրում է շարունակական բնույթ:

Վերջին տարիներին արդեն կայուն բնույթ է ստացել հրավիրյալ դասախոսի ինստիտուտի կիրառումը մեր ուսումնական գործընթացում: Ընդ որում, դա վերաբերում է ինչպես պրակտիկ աշխատողների կողմից կամ նրանց հետ համատեղ դասախոսությունների, սեմինարների իրականացմանը, այնպես էլ արտերկրի մեր գործընկերների կողմից դասախոսություններով հանդես գալուն:Օրինակ, անցած ուսումնական տարվա ընթացքում ֆակուլտետում դասախոսություններ են կարդացել առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատավորներ, պրոբացիոն ծառայության աշխատակիցներ, իսկ IRZ-ի աջակցությամբ՝ Ռայնբախի առաջին ատյանի դատարանի նախագահ Սիլվիա Վուրմը, Վալդբրյոլի առաջին ատյանի դատարանի նախագահ Ֆաբիան Քրափոթը:

Բացի այդ, ֆակուլտետի բազմաթիվ դասախոսներ զբաղված են պրակտիկ գործունեությամբ, ինչը ևս թույլ է տալիս ուսումնական պրոցեսում ապահովել գիտություն և պրակտիկա կապը, ուսանողներին փոխանցել պրակտիկ գիտելիքներ և հմտություններ:

Ֆալուլտետում սեմինար և գործնական պարապմունքների կազմակերպման գործընթացի անընդհատ կատարելագործվում է. որտեղ շեշտը դրվում է գործնական իրավիճակների հիման վրա կազմված իրավական խնդիրներ լուծելու, կոնկրետ գործեր ուսումնասիրելու, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական, ՀՀ Սանմանադրական և Վճռաբեկ դատարանների որոշումների ուսումնասիրման և վերլուծության վրա: Քաղաքացիական, քաղաքացիական դատավարության, քրեական դատավարության ամբիոնների կողմից ուսանողներին տրվող հանձնարարությունները առավելապես կրում են պրակտիկ ուղղվածություն՝ կազմել իրավական փաստաթղթերի նախագծեր (հայցադիմումներ, վերաքննիչ եւ վճռաբեկ բողոքներ, վճիռներ և միջանկյալ դատական ակտեր, պայմանագրեր): Արդեն ավանդույթ է դարձել ուսանողներ հետ ուսումնական դատախաղերի անցկացումը, որում հատկապես ակտիվ է քրեական դատավարության ամբիոնը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց առանձին կարևորություն է ստացել դրանց կիրառումը դասավանդման գործընթացում: Թեև առանձին տեղեկատվական տեխնոլոգիաները լայնորեն կիրառվում են դասավանդման, ուսանողների հետ մասնագիտական շփում ապահովելու, քննարկումներ ծավալելու գործընթացում, սակայն դեռևս արդյունավետորեն չի կիրառվում ԵՊՀ-ի կողմից ներդրված, բազմաֆունկցիոնալ «մուդլ» համակարգը: Առաջիկա ուսումնական տարվա ընթացքում դրա կիրառման արդյունավետության բարձրացումը պետք է լինի ֆակուլտետի առաջնային խնդիրներից մեկը: Միաժամանակ, նախատեսվում է քննարկել ՏՏ հետ կապված այլ մեթոդների կիրառման հնարավորությունը, այդ թվում՝ տեսաֆիլմերի, խաղարկային նյութերի պատրաստման միջոցով, որի նպատակով էլ ԵՊՀ-ի մասնակցությամբ իրականացվող PRINTEL ծրագրի շրջանակներում ֆակուլտետի երկու դասախոսներ (Ա.Մարգարյան և Ա.Սիմոնյան) մասնակցում են վերապատրաստումների՝ ՏՏ տեխնոլոգիաները իրավագիտության ֆակուլտետի կրթական գործընթացում առավել հաջողությամբ ներդրնելու նպատակով:

Ընդ որում, ուսումնական տեսանյութերի պատրաստմանն ուղղված քայլեր արդեն իսկ արվել են. ԵՊՀ-ի և IRZ-ի կողմից 2018 թ.-ի հոկտեմբերին իրականացված դատախաղի ընթացքը տեսանկարահանվել է և դրանից պատրաստվել են ուսումնական նյութեր, որոնք անմիջականորեն կօգտագործվեն Քրեական դատավարություն դասընթացի դասավանդման գործընթացում:

Պետք է նշել, որ ուսումնական գործընթացում նոր մեթոդների ներդրման արդյունքում նկատվում է գործնական պարապմունքներին ուսանողների ակտիվ մասնակցության աճ:

Առանձին կարևություն ունի ուսանողների կողմից կուրսային, գիտական, ավարտական և մագիստրոսական աշխատանքների իրականացման, ինչպես նաև քննական գործընթացի կազմակերպումը:

Ֆակուլտետում դասավանդվող առարկաների ճնշող մեծամասնության ինչպես ընթացիկ, առանձին դեպքերում՝ նաև եզրափակիչ ստուգումները անցկացվել են գրավոր եղանակով՝ խնդիրների լուծման ձևով: Տարեցտարի փոփոխվում և առավել հստակեցվում են խնդիրների բովանդակությունը և առաջադրվող հարցերը, միաժամանակ, փորձեր են կատարվում քննությունների անցկացման նոր մեթոդների կիրառման ուղղությամբ, մասնավորապես՝ ուսանողներին ուղարկվում է քննական առաջադրանքը, որին էլ կարող են պատասխանել իրեյնց գտվելու վայրից՝ սահմանափակ ժամանակահատվածի ընթացքում (exam at home), կամ քննական առաջադրանքին լսարանում պատասխանելիս հնարավորություն է ընձեռվում օգտվել գրականությունից (open book exam):

Ուսանողների հետազոտական հետաքրքրասիրությունը խթանելու, նրանց կողմից իրականացվող հետազոտական աշխատանքն առավել արդիական և կիրառելի դարձնելու նպատակով, ամբողջովին վերանայվել է կուրսային, գիտական, ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմատիկան: Մասնավորապես, ֆակուլտետի նախաձեռնությամբ արդեն երկրորդ անգամ առավել արդիական գործնական խնդիրների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով նամակներ են ուղարկվել ավելի քան 40 գերատեսչությունների, որոնցից ստացած արձագանքների հիման վրա մշակվել է առաջնահերթ ուսումնասիրություն պահանջող հիմնախնդիրների թեմատիկա: Ընդ որում, նշված կառույցների հետ պայմանավորվածության համաձայն՝ իրականացված հետազոտությունների արդյունքները, տրամադրվելու են համապատասխան կառույցներին՝

օժանդակելու համար պրակտիկայում առաջացած խնդիրների լուծմանը: Բնական է, որ նման մոտեցումը ենթադրում է առավել բարձր պատասխանատվություն և պահանջկոտություն նաև ուսանողի կողմից իրականացված ուսումնասիրության որակի նկատմամբ:

գ) Ուսանողական պրակտիկայի կազմակերպում

Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակյալ կադրերի պատրաստման, իրավաբանական կրթության և պրակտիկայի ինտեգրման գործընթացում կարևորվող քայլերի առումով չենք կարող չանդրադառնալ ***պրակտիկայի*** կազմակերպման հիմնախնդրին, քանի որ հենց պրակտիկայի ընթացքում է դրսևորվում ուսումնական հաստատությունում ստացված գիտելիքների գործնականում կիրառելու հմտությունը, ձևավորվում ապագա մասնագետի ինքնուրույն մասնագիտական գործունեություն ծավալելու կարողությունը:

Այս ուղղությամբ ձեռնարկված թերևս առավել կարևոր քայլերից մեկը դեռևս նախորդ տարվանից «կամավոր պրակտիկայի» ներդրման ուղղությամբ գրանցված հաջողություններն են, ինչը մեծացնում է ոչ միայն նրանց հետաքրքրվածությունը մասնագիտության նկատմամբ, այլև պահանջկոտությունը՝ ուսումնական գործընթացում գործնական հմտությունների ձևավորմանն ուղղված մեթոդների առավել լայն կիրառման առումով:

Այսօր արդեն կարելի է հավաստել, որ այս նախաձեռնությունը, որի հեղինակները հիմնականում ուսանողներն են, հաջողությամբ իրականացվում և ընդլայնվում է:

դ) Իրավաբանական կլինիկայի գործունեություն

Տեսական գիտելիքները գործնականում կիրառելու, իրավաբանի հմտություններ ձևավորելու լավագույն և առավել հաջողված տարբերակներից մեկը իրավաբանական կլինիկայի շրջանակներում ուսանողների ծավալած գործունեությունն է: Այդ առումով անգնահատելի է ԵՊՀ իրավաբանական կլինիկայի գործունեությունը, որը արդեն դարձել է կայացած, բնակչության և պետական կառույցների շրջանում ճանաչում ստացող կառույց, ինչի վկայությունն է նաև դրա թե ծանրաբեռնվածության անընդհատ ավելացումը, թե դիմող կառույցների շրջանակի ընդլայնումը:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ իրավաբանական կլինիկայում անվճար իրավաբանական ծառայություններ են ստացել 150 քաղաքացիներ, որոնցից 100-ը քաղաքացիական, 21-ը վարչական, 14-ը քրեական և 15-ը Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացվող գանգատ կազմելու գործերով: Կլինիկայում ընդունված 150 գործերից շուրջ 90-ը ավարտված է, որոնցից 50%-ից ավելին՝ դրական ելքով: Ուսանողների կողմից կազմվել և հաճախորդին է հանձնվել ՀՀ Սահմանադրական դատարանին ուղղված դիմում, որով վիճարկվում է 1998թ. ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի ենթադրյալ հակասահմանադրական նորմի սահմանադրականությունը:

Կլինիկայի գործունեության վերաբերյալ հասարակության շրջանում իրազեկվածությունը բարձրացնելուն ուղղված տպագրվել են տեղեկատվական բուկլետներ, որոնք բաժանվել են տարբեր պետական և ոչ պետական մարմիններին, ինչպես նաև կլինիկա դիմած քաղաքացիներին: Վերջինիս գործունեությունը լուսաբանվում է նաև տեղեկատվական հարթակում, սոցիալական ցանցերում:

Այնուամենայնիվ, հաճախորդների մեծամասնությունը Իրավաբանական կլինիկա է ուղղորդվել ՀՀ Ֆինանսական համակարգի հաշտարարի, ՀՀ Հանրային պաշտպանի գրասենյակի և ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակներից, ՀՀ ոստիկանությունից:

Իրավաբանական կլինիկան այս տարի ևս իրականացրել է «Իրավունք բոլորի համար» ծրագիրը, որի շրջանակներում դասավանդողները երեխաներին ոչ միայն գիտելիքներ են տվել, այլև պարզաբանել կոնկրետ իրավիճակների վերաբերող իրավական խնդիրների: 2018-2019 ուս. տարվա համար ԵՊՀ իրավաբանական կլինիկան «Իրավունք բոլորի համար» ծրագրի շրջանակում համագործակցության վերաբերյալ պայմանավորվածություն է ձեռք բերել GIZ կազմակերպության հետ: Այս ծրագրի շրջանակում անցկացվելու են մարդու հիմնարար (սահմանադրական) իրավունքների վերաբերյալ դասընթացներ ՀՀ երեք մարզերի (Տավուշ-ք.Դիլիջան, Շիրակ-ք.Արթիկ, Կոտայք-ք.Հրազդան) ավագ դպրոցներում:

ԵՊՀ Իրավաբանական կլինիկայի արդյունավետ գործունեությունը, իրավաբանական կլինիկայում ընդգրկվելու ցանկություն հայտնող ուսանողների թվի ավելացումը հանգեցրել է դրա ընդլայնման, ինչպես նաև նոր ուղղություններով գործունեություն ծավալելու անհրաժեշտություն:

Մասնավորապես, աշակերտների շրջանում իրականացվող «Իրավունք բոլորի համար» ծրագիրը վեր է հանել անչափահասների հիմնախնդիրներով մասնագիտացմամբ կլինիկա ձևավորելու անհրաժեշտությունը: 2018-2019 ուս. տարվա համար ԵՊՀ իրավաբանական կլինիկան նախատեսում է զարգացնել համագործակցությունը ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հետ՝ ուղղված «Անչափահասների իրավունքներ» կլինիկական ուղղություն ձևավորելուն և այն կյանքի կոչելուն:

Կլինիկայի զարգացման հնարավոր մյուս ուղղությունը փախստականների հիմնախնդիրներով մասնագիտացումն է: Այդ ոլորտում մասնագիտացման նախադրյալներ արդեն իսկ առկա են, նախ, ուսանողները մասնակցել են *ՄԱԿ ՓԳՀ-ի, «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի* կողմից արդեն 7-րդ տարին ավանդաբար կազմակերպվող փախստականների իրավունքների վերաբերյալ ամենամյա դպրոցին, նշված հիմնախնրին վերաբերող այլ միջոցառումների: Բացի այդ, հաշվետու ժամանակաշրջանում Իրավաբանական կլինիկան համագործակցության հուշագիր է ստորագրել *ՄԱԿ ՓԳՀ-ի և «Առաքելություն Հայաստան»* բարեգործական ՀԿ-ի հետ, որի հիման վրա ԵՊՀ իրավաբանական կլինիկան սկսել է իրականացնել «Իրավունք բոլորի համար. Փախստականների իրավունք» ծրագիրը: Հուշագրի շրջանակներում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և իրավաբանական կլինիկայի 2 ուսանող (ներկայումս պրակտիկա են անցնում Առաքելություն Հայաստան ԲՀԿ-ում՝ որպես կազմակերպության փաստաբանների օգնականներ, ինչը հնարավորություն է տալիս նրանց կիրառել փախստականների և տեղահանված անձանց իրավունքների ոլորտում նախորդ տարիների փախստականների իրավունքի դպրոցի արդյունքում իրենց ձեռք բերած տեսական գիտելիքները՝ համադրելով դրանք ոլորտին առնչվող պրակտիկ գիտելիքներով:

Հաշվետու ժամանակահատվածում փոխըմբռնման հուշագիր է կնքվել նաև ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հայաստանյան գրասենյակի հետ, որը նախատեսում է բազմաբովանդակ համագործակցություն՝ միտված

միջազգային մարդասիրական իրավունքի և միջազգային հանրային իրավունքի ոլորտում կրթության և հետազոտական գործունեության խթանմանը, այդ թվում՝ նախատեսվում է ստեղծել միջազգային հանրային իրավունքի իրավաբանական կլինիկա:

2018-2019 ուս. տարվա համար ԵՊՀ իրավաբանական կլինիկան նախատեսում է շարունակել իր գործունեությունը՝ ուղղված «Առողջապահական իրավունք» մասնագիտացմամբ կլինիկական ծրագիր ձևավորելուն և զարգացնելուն: Նախորդ տարվա համագործակցության արդյունքում Իրավաբանական կլինիկայի մի քանի ուսանողներ անցել են պրակտիկա «Իրավունքի զարգացման կենտրոն» ՀԿ-ում, իսկ այս տարի նույն կազմակերպությունը ցանկություն է հայտնել առողջապահական իրավունքի ոլորտում իրավաբանի թափուր հաստիքի համար աշխատանքի ընդունելու կլինիկայի մեկ ուսանողի: Բացի դրանից՝ հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ իրավաբանական կլինիկան համագործակցել է «Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» ՀԿ-ի հետ:

Ակնհայտ է, որ իրավաբանական կլինիկան արդեն իսկ կայացած կառույց է և պատահական չէ, որ այն հանդիսանում է մոդել այլ ԲՈՒՀ-երում իրավաբանական կլինիկաներ ձևավորելու գործում: Մասնավորապես, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի, ԱՄՆ Հայ իրավաբանների միության և Արցախի պետական համալսարանի միջև կնքված համագործակցության հուշագրի հիման վրա Արցախի պետական համալսարանում իրավաբանական կլինիկա ձևավորելիս կարևոր դերակատարություն ունեցավ նաև ԵՊՀ Իրավաբանական կլինիկան:

2. Գիտահետազոտական աշխատանք

Ֆակուլտետի վարկանիշի բարձրացման տեսանկյունից չափազանց կարևոր նշանակություն ունեն մեր դասախոսական կազմի կողմից կատարված գիտական հետազոտությունները, հրապարակված գիտական աշխատությունները, այդ թվում՝ օտար լեզուներով: Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը ծավալել է նաև ակտիվ գիտահետազոտական գործունեություն, մասնավորապես, նրանց կողմից հրատարակվել են 6 մենագրություն, 91 գիտական հոդված, 7 ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկներ: Ֆակուլտետի բոլոր ամբիոնների դասախոսներն ակտիվ մասնակցություն են ունեցել ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի՝ արդեն իսկ ավանդական դարձած գիտական նստաշրջանին:

Հաշվետու ժամանակաշրջանում կարևոր ձեռքբերումներից մեկը ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի՝ անգլերեն լեզվով գիտական հոդվածների 2-րդ ժողովածուի հրապարակումն էր՝ առավել ներկայացուցչական կազմով և հիմնախնդիրների շրջանակով: Այն առաջիկայում կուղարկվի արտերկրի գիտական-կրթական հաստատություններ, գրադարաններ՝ դրանով իսկ նպաստելով ինչպես մեր դասախոս գիտնականների, այնպես էլ ԵՊՀ-ի ճանաչմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ավարտին է հասցվել ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող՝ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դասախոսների կողմից իրականացվող թեմատիկ հետազոտությունը՝ նվիրված վճռաբեկության ինստիտուտի հիմնախնդիրներին և որի շրջանակներում հրատարակվել են մեկ տասնյակից ավելի գիտական հոդվածներ և մեկ մենագրություն: Նաև հաստատվել է ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի կողմից

ֆինանսավորվող նոր թեմատիկ հետազոտություն՝ նվիրված անչափահասների գործերով արդարադատության հիմնախնդիրներին:

Ֆակուլտետի դասախոսական կազմը ներգրավված է եղել նաև մի շարք հետազոտական ծրագրերում՝ INL-ի կողմից ֆինանսավորվող «Հայաստանում Արդարադատության ակադեմիայի համար հակակոռուպցիոն և մարդու իրավունքներին վերաբերող դասընթացների մշակում», ԱՄՆ-ի պետդեպարտամենտի կողմից ֆինանսավորվող «Անչափահասների արդարադատության բարելավման և դեռահասների՝ մարդու իրավունքների առաջխաղացման» թեմայով դրամաշնորհային ծրագրերին: Ի դեպ վերջին ծրագրի շրջանակում նոյեմբերի 29-30-ը ԵՊՀ-ում ֆակուլտետի կողմից կազմակերպվեց և հաջողությամբ անկացվեղ 2-օրյա գիտապրակտիկ խորհրդաժողով: Ներկայումս հակակոռուպցիոն և մարդու իրավունքներին վերաբերող դասընթացների մշակմանն ուղղված դրամաշնորհային ծրագիր է իրականացվում նաև Փաստաբանների դպրոցի համար, արդեն Նոթինգեմի համալսարանի մասնակցությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի դասախոսների կողմից ՀՀ օրենսդրության վիճահարույց հիմնախնդիրների վերաբերյալ կազմակերպվել են մեկ տասնյակից ավելի հանդիպում-քննարկումներ պրակտիկ աշխատողների, ՀԿ-ների ներկայացուցիչների, ուսանողների հետ: Քրեական իրավունքի, Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի, Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի դասախոսների և Լյուբլանայի, Պրիմորսկայի, ինչպես նաև Վարշավայի համալսարանների դասախոսների մասնակցությամբ անց են կացվել կլոր սեղաններ և գիտական քննարկումներ՝ նվիրված քրեական իրավունքի հիմնախնդիրներին:

Առաջիկայում ևս նման միջոցառումներ նախատեսվում են, մասնավորապես գարնանը DAAD աջակցությամբ նախատեսվում է կլոր սեղանի անցկացում՝ որի ընթացքում կհյուրընկալվեն վրացի, գերմանացի գործընկերներ՝ քրեակատարողական ընթացակարգի զարգացմանը նվիրված հիմնախնդիրներ քննարկելու նպատակով:

Մեր դասախոսները հանդես են եկել նաև զեկուցումներով տարբեր հարթակներում և կառույցներում: Օրինակ՝ Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի վարիչ պրոֆ. Ա.Վաղարշյանը «Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման նախադրյալները» վերտառությամբ զեկուցմամբ հանդես է եկել Հայաստանի Հանրապետությունը և Հայ եկեղեցու դերակատարությունը հայոց պետության կայացման գործում (1918-2018) խորագրով գիտաժողովում (Մայր Աթոռ Սուրբ էջմիածին):

Առանձին քայլեր ձեռնարկվել են նաև այլ գիտական կառույցների հետ համատեղ հետազոտություններ իրականացնելու ուղղությամբ, օրինակ՝ Սահմանադրական իրավունքի ամբիոնի և ՌԴ կառավարությանն առընթեր օրենսդրության համակարգման և հանրային կառավարման ինստիտուտի համատեղ ջանքերով կազմվել է աշխատանքային ծրագիր՝ վարչական իրավունքի դասագրքում՝ ՀՀ վարչական իրավունքին վերաբերող հատված ներառելու առնչությամբ:

Պետք է արձանագրել, որ ֆակուլտետում նախորդ տարիների համեմատ ակտիվացել է դասախոսական կազմի հետազոտական գործունեությունը, սակայն այն դեռևս գոհացուցիչ գնահատվել չի կարող:

3. Ուսանողների հետ տարվող աշխատանքներ

Ֆակուլտետի զարգացման կարևոր ուղղություններից է կրթական միջավայրի բարելավմանը, ուսանողների աօրյան առավել հետաքրքիր դարձնելուն ուղղված միջոցառումների իրականացումը:

Այդ առումով, 2017-2018 ուս. տարում ակտիվ գործունեություն են ծավալել ուսանողական կառույցները: Մասնավորապես, ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերությունը, շարունակելով իր ակտիվ գործունեությունը, պահպանել է առաջատարի դիրքերը ԵՊՀ-ում: Ընդհանուր առմամբ կազմակերպվել է 16 հանդիպում, 8 այցելություն (այդ թվում՝ ՀՀ փաստաբանների պալատ, ՀՀ սահմանադրական դատարան, ՀՀ Ազգային Ժողով, ՀՀ ԴԱՀԿ ծառայություն, ՀՀ կենտրոնական բանկ), 12 քննարկում (այդ թվում՝ ԱՄՆ դատախազ Ալիսոն Ռոքերի հետ, ԵԱՏՄ դատավորների հետ), 15 սեմինար, 2 գիտաժողով, 2 մրցույթ, 3 դատախաղ: Հաշվետու ժամանակահատվածում ՈՒԳԸ և ՈՒԽԸ համատեղ հետաքրքիր նախաձեռնություններից էր «Հաջողության պատմություններ» հանդիպումների շարքը ֆակուլտեի դասախոսների հետ, «Ինչպես մասնակցել միջազգային դատախաղերի» հանդիպումների շարքը:

Մեծ ուշադրություն է դարձվել արդիական հիմնախնդիրներով գիտական բանավեճեր կազմակերպելուն: Մասնավորապես, կազմակերպվել են քննարկումներ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ և ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքերի նախագծերի հայեցակարգային դրույթների վերաբերյալ: Սահմանադրական իրավունքի ամբիոնի և ՈՒԳԸ համատեղ ջանքերով կազմակերպվել է նաև Ազգային ժողովի ուսումնական նիստ:

ՈՒԳԸ մի քանի անդամներ նաև մասնակցել են տարբեր միջազգային ծրագրերի, փոխանակման ծրագրով ուսանել են արտերկրում:

Ֆակուլտետում ակտիվ է նաև դասախոսական կազմի ներկայացուցիչների կողմից ուսանողների հետ տարվող աշխատանքը, որը կազմակերպվում է մի քանի ուղղություններով (քննարկումներ, բանավեճեր, դատախաղեր, այլ կառույցների մասնագետների հետ հանդիպումներ և այլն):

Ուսանողների հետ անցկացվել են սեմինարներ, դասախոսություններ՝ նվիրված գիտական, դիպլոմային աշխատանք և մագիստրոսական թեզ գրելու հմտություններին, իրավաբանական արդի հիմնախնդիրներին (օրինակ՝«Քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը», «Փաստաբանի գործնական հմտությունները» թեմաներով): Շարունակվել է նաև Կարիերայի կենտրոնի կողմից կազմակերպված «Իրավաբանական անգլերեն» դասընթացների շարքը, մանսավորապես անգլերեն լեզվով սեմինարներ են իրականացվել՝ «Վարչական ակտերի վերանայումը», «ՀՀ վարչական դատարան դիմելու իրավունքը» խորագրերով: Քաղաքացիական իրավունքի ամբիոնի նախաձեռնությամբ 2018 թվականի փետրվարին ուսանողների համար Բրեմենի համալսարանի պրոֆեսոր, Թբիլիսիի և Քիշնևի պետական համալսարաների պատվավոր դոկտոր Ռոլֆ Քնիպերի մասնակցությամբ կազմակերպվել է դասախոսություն նվիրված խնդիրների լուծման մեթոդիկային: Ուսանողները մասնակցել են նաև գերմանական GIZ ընկերության կողմից կազմակերպված ամառային և ձմեռային դպրոցներին:

Ամբիոններն ակտիվ մասնկացություն են ցուցաբերում ուսանողների կողմից գիտական աշխատանքներ պատրաստելու հարցում, և դրա վառ ապացույցը ՈՒԳԸ տարեկան նստաշրջանին իրավունքի տարբեր ենթաբաժինների գծով ուսանողների ակտիվ

մասնկացությունն է: Այս առումով թերևս միակ խնդիրն այն է, որ միջազգային և եվրոպական իրավունքի դասավանդումն ավարտվում է առկա ուսուցման 4-րդ տարվա 1-ին կիսամյակում, երբ ուսանողներն սկսում են նախապատրաստվել պետական քննություններին և հնարավորություն չեն ունենում բավարար ժամանակ հատկացնել գիտական աշխատանքներ պատրաստելուն: Արդյունքում միջազգային և եվրոպական իրավունքից ուսանողական գիտական աշխատանքների քանակը քիչ է ակնկալվածից:

Ուսանողների հետ աշխատանքի ինքնուրույն ուղղություն է նաև նրանց ներգարվումը դասախոսական կազմի կողմից իրականացվող գիտական-գործնական կոնֆերանսներին, որոնց ընթացքում ուսանողները ոչ միայն նոր գիտելիքներ են ստանում, այլև հնարավորություն ունենում շփվել իրավակիրառ գործունեություն ծավալող անձանց հետ, ինչն էլ հետագայում նպաստում է նրանց պրակտիկայի վայրի ընտրությանը, իսկ առանձին դեպքերում՝ հետագայում աշխատանքի ընդունմանը:

Առամնձին կարոևորություն ունի ուսաողների մասնակցությունը ներպետական և միջազգային դատախաղերին. մեր ֆակուլտետի ուսանողները 2017-2018 ուս տարում մասնակցել են 7 (որից 4-ը միջազգային, 3-ը՝ միջբուհական) մրցույթների՝ միջազգային մարդասիրական իրավունքի՝ Մարտենսի, Միջազգային քրեական իրավունքի՝ Նյուրնբերգի, Ջեսսափի մրցույթներին, Նելսոն Մանդելայի մրցույթին, ԵՊՀ ի և IRZ կազմակերպության կողմից համատեղ իրականացվող Քրեական իրավունքի և դատավարության դատախաղ-մրցույթին (հաղթող), ՀԱՀ՝ Մեդիացիոն և Արբիտրաժային մրցույթին (հաղթող), ՀԱՀ՝ 2017-2018թթ մտավոր սեփականության իրավունքի դատախաղ մրցույթին (երկրորդ տեղ), Ֆրանկֆուրտի՝ միջազգային ներդրումային իրավունքի դատախաղերին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վերաբերյալ դատախաղի ազգային փուլին: Դատախաղերի մասնակցության միտումը գնալով աճում է. այս տարի ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի ուսանողների կողմից կողմից արդեն իսկ թիմեր են ձևավորված ավելի քան 7 միջազգային մրցույթի մասնակցելու համար: Ընդ որում, տարեցտարի աճում է նման դատախաղերի հանդեպ թե հետաքրքրությունը, թե որպես դրանց մասնակցության պարտադիր պահանջ՝ լեզուների իմացության մակարդակը:

4. Կադրերի պատրաստման խնդիրներ

Բնականաբար, կրթության որակի ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի ֆակուլտետում կադրերի պատրաստման հարցը:

Կրկին, պահպանվում է կադրերի հոսունության միտումը, ինչը բնական գործընթաց է և մի կողմից նպաստում է ֆակուլտետի հեղինակությանը, մյուս կողմից՝ ձևավորում է ֆակուլտետը նոր կադրերով համալրելու անհրաժեշտություն:

Ֆակուլտետում ներկայումս դասավանդող կադրերի շուրջ 60-70%-ը համալսարանի աշխատանքը համատեղում են պետական կառույցներում կամ մասնավոր ոլորտում իրականացվող աշխատանքի հետ: Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետն ուներ 35 ասպիրանտ, որոնցից 10 հոգի պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն, իսկ Քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ Ա.Մարգարյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն:

Կարևոր նշանակություն է տրվել նաև կադրերի վերապատրաստմանը. Քաղաքացիական դատավարության ամբիոնի երկու դասախոսներ վերապատրաստում են անցել ԱՄՆ Թաֆթս համալսարանի Ֆլետչերի իրավունքի եւ դիվանագիտության դպրոցում Հանրային քաղաքականություն եւ կառավարում ծրագրով:

Շվեդիայի դեսպանատան նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ միջազգային արդարադատության ոլորտի առանձին դասընթացների՝ ֆակուլտետում ներդրման նպատակով կադրեր պատրաստելու ուղղությամբ:

5. Ֆակուլտետի միջազգայնացում և ճանաչում

Ֆակուլտետի գործունեության առաջնահերթություններից է ֆակուլտետի գործունեության միջազգայնացումը, որի ուղղությամբ ևս լուրջ քայլեր են ձեռնարկվել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից: Որոշակի աշխատանքներ են իրականացվել միջազգային կապերի հաստատման և ընլայնման ուղղությամբ, մասնավորապես ստորագրվել համագործակցության հուշագիր Սլովենիայի համալսարանի, Կարմիր Խաչի Հայաստանյան ներկայացուցչության հետ:

Ֆակուլտետի դասախոսները նաև ակտիվ մասնակցություն են ցուցաբերել միջազգային գիտաժողովներին և կոնֆերանսներին: Ընդհանուր առմամբ, մեր դասախոսները, ասպիրանտները մասնակցել են 3 տասնյակից ավելի միջազգային սեմինարների, հանդիպումների:

Ֆակուլտետի դասախոսները գիտական հոդվածներ են տպագրել նաև արտասահմանյան էլեկտրոնային պարբերականներում: Մասնավորապես, Քրեական իրավունքի և Քրեական դատավարության և Կրիմինալիստիկայի ամբիոնի դասախոսները գիտական հոդվածներ են հրատարակել Միջին-վոլգյան համալսարանի և Երևանի Պետական Համալսարանի կողմից համատեղ Մորդովիայի Հանրապետության մայրաքաղաք Սարանսկում կազմակերպված հեռավար միջազային գիտաժողովի նյութերի ժողովածուում:

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետում դասախոսություններ են կարդացել հրավիրյալ դասախոսներ: Մասնավորապես, պրոբացիայի հիմնախնդիրներով սեպտեմբեր ամսին դասախոսություններ են կարդացել Գերմանիայի Դաշնային Հանրապետության Ռայնբախի առաջին ատյանի դատարանի նախագահ Սիլվիա Վուրմը և Վալդբրոյլի առաջին ատյանի դատարանի նախագահ Ֆաբիան Քրափոթը, իսկ մագիստրատուրայում՝ կրիմինալոգիա մագիստրոսական ծրագրի շրջանակներում, դասախոսություններ է կարդացել Գերմանիայի Դոռնոխի համալսարանի դասախոս Սերգեյ Բաբայանը:

Այնուհանդերձ, ֆակուլտետի միջազգայնացմանն ուղղված աշխատանքները դեռևս գոհացուցիչ չեն: Թեև ֆակուլտետի դասախոսական կազմի ներկայացուցիչները մասնակցում են միջազգային միջոցառումների, սակայն դրանք առավելապես էպիզոդիկ բնույթ են կրում, չեն նպաստում հետագա գիտական կապերի ձևավորմանն ու կայուն համագործակցության զարգացմանը: Ցածր է գիտական կոնֆերանսներին զեկուցումներով հանդես գալու, միջազգային պարբերականներում հրատարակություններ ունենալու հաճախականությունը:

Այս առումով, նախատեսում ենք առաջիկա ուսումնական տարում վերանայել մոտեցումը և փորձել խնդիրը լուծել, կամ յուրաքանչյուր ամբիոնում միջազգային կապերի զարգացման համար պատասխանատու անձ առանձնացնելով, կամ յուրաքանչյուր ամբիոնի վրա 1-2 տարին մեկ միջազգային բնույթի միջոցառում մկազմակերպելու պարտականություն սահմանելով: Տարբերակները այս պահին քննարկման փուլում են:

Բացի այդ, ժամանակի հրամայական է կրկնակի դիպլոմով ուսումնական ծրագրերի ներդրումը, որի ուղղությամբ այս պահին ֆակուլտետը գործունեություն է ծավալում

Գերմանիայի և Մեծ Բրիտանիայի համալսարանների հետ: Սակայն այս պահի դրությամբ դեռևս կրկնակի դիպլոմ տվող մագիստրոսական ծրագրեր ֆակուլտետում չեն գործում:

Կարևոր նշանակություն ունի նաև Իրավագիտության ֆակուլտետի դասախոսական կազմի ներգրավումը օտարալեզու դասավանդման գործընթացին՝ ՀՀ-ում կամ արտերկրում: Սա հնարավորություն կտա մի կողմից խթանել ուսանողների փոխանակման ծրագրերը, մյուս կողմից՝ կնպաստի ֆակուլտետի զարգացմանը: Նախորդ ուսումնական տարում ֆակուլտետում փոխանակման ծրագրով ուսանում էին Իտալիայի Բոլոնիայի համալսարանի ուսանողներ, սակայն աշխատանքի արդյունավետությանը խոչընդոտող գործոններից մեկն այն էր, որ դասախոսները ստիպված էին աշխատել 1-2 հոգու հետ, անհատական ռեժիմով:

6 Ֆակուլտետի համագործակցություն այլ կառույցների հետ

ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի ճանաչման ուղղությամբ իրականացվող կարևոր քայլերից է ֆակուլտետի համագործակցությունը այլ գիտական և իրավակիրառ գործունեություն ծավալող կառույցների հետ: Մասնավորապես, շարունակելով նախորդ տարի սկսված նախաձեռնությունը՝ աջակցել Արցախի պետական համալսարանում Իրավագիտության ֆակուլտետի կայացմանը, 2018թ.-ին ԵՊՀ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, ի.գ.դ. Ա.Հայկյանցը, Քաղաքացիական դատավարությամբ ամբիոնի պրոֆեսոր, ի.գ.դ. Վ. Հովհաննիսյանը, իսկ այս տարվա սկզբին՝ նաև Քրեական դատավարության, Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները գործուղվել են Արցախի Հանրապետության պետական համալսարան: Աշխատանքային գործուղման նպատակն է եղել՝ ըստ համապատասխան մասնագիտացումների՝ դասախոսություններ կարդալ վաղօրոք համաձայնեցված թեմաներով, ինչպես նաև աջակցել ուսումնական ծրագրերի կատարելագործմանը, ուսումնական գործընթացի բարելավմանը:

2017 թ. դեկտեմբերի 1-ին Սահմանադրական իրավունքի ամբիոնի երկու դասախոսների (Գ.Դանիելյան և Հ.Ենգոյան) և Սահմանադրական դատարանի երկու դատավորների (Ա.Գյուլումյան և Հ.Նազարյան) մասնակցությամբ Եվրախորհրդի Երևանյան գրասենյակի հետ կնքել են պայմանագիր՝ Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների համակարգման, դրանց կատարման և ՄԻԵԴ-ի որոշումների հետ համեմատական վերլուծություն իրականացնելու հարցադրումներով՝ 2-րդ հատորը պատրաստելու վերաբերյալ: Ծրագրի համակարգման պատասխանատվությունը վերապահված է Գ.Դանիելյանին: Այս հետազոտությունը Եվրախորհրդի Ստրասբուրգյան փորձագետների դիրքորոշմամբ ճանաչվել է վերջին երեք տարիների ընացքում լավագույն ծրագրերից մեկը:

Ֆակուլտետի էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի կողմից էկոլոգիական իրավունքի դասընթացներ են կազմակերպել քաղաքացիական ծառայողների, լրագրողների համար: Սահմանադրական իրավունքի, Քրեական իրավունքի և Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնների դասախոսների կողմից վերապատրաստումներ են իրականացվել դատավորների, դատախազների, ՀՔԾ քննիչների, ԴԱՀԿ աշխատակիցների, փաստաբանների, հանրային ծառայողների համար:

Մեր աշխատակիցները ներկայացված են նաև միջազգային հարթակներում, օրինակ՝ Միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Ստեփանյանը Քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի, ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Վ. Քոչարյանը Եվրոպայի խորհրդի արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի անդամ

Է, ԱՊՀ արդարադատության նախարարների խորհրդի աշխատանքային խմբի ղեկավար, ամբիոնի դոցենտ, ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Վ.Վարդանյանը Միջազգային և համեմատական իրավունքի կենտրոնի, Ցեղասպանության հետազոտությունների միջազգային ասոցացիայի անդամ է:

7. Կարիերայի կենտրոն

Իրավաբանական կրթության և պրակտիկայի ինտեգրման գործընթացում կարևորվում է կարիերիայի կենտրոնի գործունեությունը: Հաշվետու ժամանակահատվածում իրավագիտության ֆակուլտետի կարիերայի կենտրոնը շարունակել է կապեր հաստատել տարբեր պետական մարմինների հետ՝ ֆակուլտետի շրջանավարտներին ու ուսանողներին աշխատանքով ապահովելու, ինչպես նաև վերջիններիս պրակտիկան կազմակերպելու նպատակով: Կենտրոնի ջանքերով աշխատանքի են տեղավորվել ֆակուլտետի՝ թվով 25 շրջանավարտ:

Գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով Իրավագիտության ֆակուլտետի կարիերայի կենտրոնը համագործակցում է ԵՊՀ կարիերայի կենտրոնի հետ:

Կարիերայի կենտրոնը շարունակում է դեռևս 2017 թվականի հունվարից գործարկված ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի շրջանավարտների տվյալների միասնական բազայի ձևավորման գործընթացը, որի հիմնական նպատակը ֆակուլտետ-շրջանավարտ մշտական կապի հաստատումն ու համագործակցությունն է, ուսանողներին և շրջանավարտներին աշխատանքի և պրակտիկայի հնարավորությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովումը, ինչպես նաև արտասահմանյան բուհերում ուսումը շարունակող կամ արտերկրում մասնագիտական գործունեություն ծավալող ֆակուլտետի շրջանավարտների հետ փոխգործակցությունը: Առ այսօր օնլայն հայտեր են ստացվել ֆակուլտետի շուրջ 600 շրջանավարտներից, սակայն առկա են նաև առաջին արդյունքները՝ նախկին շրջանավարտների ջանքերով մեր ուսանողները մասնակցել են միջազգային դատախաղի, ինչպես նաև բանակցություններ են վարվում արտերկրի 3 բուհերի հետ համագործակցություն հաստատելու ուղղությամբ: Ամփոփելով հաշվետվությունը՝ դեկան Գ.Ղազինյանը հավելեց, որ ներկայումս ֆակուլտետում մշակվում է Իրավագիտության ֆակուլտետի առաջիկա 5 տարիների զարգացման հայեցակարգն ու ծրագիրը, սակայն դրանք առավել մանրամասն կներկայացվեն գարնանը՝ ֆակուլտետի գործունեության 5 տարվա արդյունքները ամփոփող հաշվետվությունը ներկայացնելիս:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պռոռեկտոր Ա.Գրիգորյանը, Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, պրոֆ. Տ.Բարսեղյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշտվետվությունը գնահատել դրական:

2. Ընթացիկ հարցեր

2.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասիստենտ Ք.Վարդանյանի կողմից ՀՀ Սփյուռքի նախարարության և ԵՊՀ-ի միջև կնքված պայմանագրի շրջանակում իրականացված գիտական հետազոտության արդյունքում պատրաստված՝ «Փախստականների և ապաստան հայցողների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավական ակտերը և դրանց ազգային իրավական իմպլեմենտացիան» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ «Փախստականների և ապաստան հայցողների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավական ակտերը և դրանց ազգային իրավական իմպլեմենտացիան» վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության:

2.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Ասպրամ Կրպեյանին ատեստավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ասպրամ Կրպեյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել անհրաժեշտ կրեդիտներ ընդհանուր պատրաստվածության կրթամասից, մասնագիտական պատրաստվածության կրթամասից, ինչպես նաև պրակտիկայից և գիտահետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ ***Գ. Ղազինյան***

Խորհրդի քարտուղար ***Տ.Սուջյան***